ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 31 » հունվար 2023թ. No 426 - Լ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-ի ԹԻՎ 1331-Լ ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈԼՈՌԵԿՏԱԼ ՔԱՂՑԿԵՂԻ ՎԱՂ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված հավելված 1-ի «Առողջապահության նախարարություն» բաժնի 5.1-րդ կետը, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ԱՆ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արման Հովակիմյանին և ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սարգիս Հովհաննիսյանին (համաձայնությամբ) և ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արմեն Իսահակյանին (համաձայնությամբ)՝

1) 2023 թվականի ընթացքում կազմակերպել Առողջապահության նախարարի 2022 թվականի մարտի 31-ի թիվ 1331-Լ հրամանով հաստատված կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շարունակական իրականացումը,

2) շարունակել Առողջապահության նախարարի 2022 թվականի մարտի 31-ի թիվ 1331-Լ հրամանի 4-րդ կետով սահմանված գործընթացի կազմակերպումը:

2. ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական

ընկերության տնօրեն Սարգիս Հովհաննիսյանին (համաձայնությամբ)՝

2023 թվականի ընթացքում Ծրագրի շահառուներին (թեստի դրական արդյունքների դեպքում) անհրաժեշտ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները (կոլոնոսկոպիկ և պաթոմորֆոլոգիական) և մասնագիտական խորհրդատվությունները (պրոկտոլոգի և ուռուցքաբանի) կազմակերպել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում՝ պայմանագրային հիմունքներով:

3. Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ Ահարոն Բարսեղյանին՝

Առողջապահության նախարարության և Ծրագրում ընդգրկված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների միջև 2023 թվականին կնքվելիք պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին պայմանագրերում նախատեսել Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի տեղակալ Արտակ Ջումայանին:

5. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումն Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ